ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

Օ Գ Ն Ա Կ Ա Ն

«01» 02 2016 թ.

Հ ՀՕ 96

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
պրն Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային միությունների գործունեությունը համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2016թ. հունվարի 29-ին կայացած նիստի որոշման համաձայն՝ կից Ձեզ եմ ներկայացնում ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով ՀՀ 2016թ. պետական բյուջեով նախատեսված քսան միլիոն ՀՀ դրամ գումարից ինը միլիոն դրամի բաշխումն՝ ըստ Խորհրդում ներկայացված էթնիկ համայնքների կազմակերպությունների (արտացոլված է կից ներկայացվող ցանկի 1-11-րդ տողերում):

Միաժամանակ հայտնում եմ, որ նույն նիստի որոշմամբ Խորհուրդը երաշխավորել է 2016թ. համար նախատեսված գումարից տասնմեկ միլիոն ՀՀ դրամը փոխանցել Խորհրդի անդամ հանդիսացող «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ հաշվեհամարին ՝ մեկ միլիոն դրամը միասնական կրթա-մշակութային միջոցառումների, իսկ տասը միլիոն դրամը՝ Խորհրդի որոշմամբ ազգային-մշակութային տարբեր կազմակերպությունների (այդ թվում՝ Խորհրդի անդամ չհանդիսացող) կողմից էթնիկ համայնքների կրթա-մշակութային զարգացմանը միտված առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի իրականացման նպատակով (արտացոլված է կից ներկայացվող ցանկի 12 և 13-րդ տողերում):

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Ա. ԱԲԵԼՅԱՆ

Հ.Հ. [illegible]
[illegible]
010 2481
01 02 2016

Հայաստանի Հանրապետության 2016 թ.պետական բյուջեով նախատեսված ծախսերից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին հատկացվող գումարի բաշխումը

N	Էթնիկ համայնքը	Կազմակերպության անունը	Բանկի անվանումը և հաշվեհամարը	Գումարը (ՀՀ դրամ)
1.	Ասորական	Հայաստանի «Աթուռ» ասորիների ասոցիացիա	«Հայէկոնոմբանկ» 163048120741	409,000
		«Ասորական «Աշուր» երիտասարդական կենտրոն» ՀԿ	«Յունիբանկ» 24124000620500	409,000
2.	Բելառուսական	Հայաստանի «Երևանի բելառուս-ների համայնք «Բելառուս»» ՀԿ	«Արդշինինվեստբանկ» 247010017991	818,000
3.	Գերմանական	«Տեվտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպություն	«Կոնվերսբանկ» 1930026634280100	818,000
4.	Եզդիական	«Եզդիների ազգային միություն» ՀԿ	«Արդշինինվեստբանկ» 2470100046920000	409,000
		«Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ	«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ 163058701547	409,000
5.	Լեհական	Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական ՀԿ	«HSBC» 001-133255-001	818,000
6.	Հունական	«Հունական հասարակական կազմակերպությունների միություն»	«Հայէկոնոմբանկ» Թումանյանի մասնա-ճյուղ 163188103481	818,000
7.	Հրեական	«Հայաստանի հրեական համայնք» ՀԿ	«Յունիբանկ» 24100100675800	818,000
8.	Ռուսական	«Հարմոնիա» ռուսական մշակույ-թի միջազգային կենտրոն» ՀԿ	«Անելիք Բանկ» ՓԲԸ 118001010875	820,000
9.	Վրացական	«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական ՀԿ	«Հայէկոնոմբանկ» 163008136661	818,000
10.	Ուկրաինական	««Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Ամերիաբանկ» 1570001167470300	818,000
11.	Քրդական	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ	«Անելիք Բանկ» ՓԲԸ Աբովյանի մասնաճյուղ 118031024318	818,000
12.	Միասնական կրթամշակութային միջոցառումների ֆինանսավորում	Համակարգող խորհուրդ «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ	«Անելիք Բանկ» ՓԲԸ 118001010875	1,000,000
13.	Կրթամշակութա-յին նպատակային ծրագրերի ֆինանսավորում	Համակարգող խորհուրդ «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ	«Անելիք Բանկ» ՓԲԸ 118001010875	10,000,000
Ընդհանուր գումարը				**20,000,000**